ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 56-Լ **«30» նոյեմբերի 2023 թ.**

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի հմ. 1902-Լ որոշմամբ հաստատված N1 հավելվածի «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բաժնի 58-րդ կետի 58.1-ին ենթակետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Համագործակցության ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման հայեցակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2023 թ. նոյեմբերի 30-ի N 56-L հրամանի

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

II. ՆԿԱՐԱԳԻՐ

III. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

IV. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

V. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սույն հայեցակարգով սահմանվում են ցանցային հայագիտական համալսարանի (այսուհետ՝ Ցանցային հայագիտական համալսարան) ձևավորման համար ձեռնարկվող համագործակցության քայլերի շրջանակը և զարգացման ապահովման սկզբունքները:
2. Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) կառուցված է կանոնակարգված, համընդհանուր և ճկուն գործընթացների կազմակերպման գաղափարախոսության առանցքի շուրջ:
3. Համաշխարհային ցանցային միջբուհական կապերի ընդլայնումը ՀՀ բարձրագույն կրթության կայուն զարգացման ապահովման կարևորագույն ուղիներից է: Ցանցային նման կապերի ստեղծումը պահանջում է նաև արդյունավետ կառավարման նոր համակարգի աստիճանական ներդնում:

Բուհերի միջև ցանցային կապերի ձևավորումը բարձրագույն կրթության որակի, հասանելիության և արդյունավետության բարձրացման, ինչպես նաև միջազգայնացման ապահովման գրավականն է:

4. Օտարերկրյա պետություններում հայկական, ինչպես նաև հայկական կրթական բաղադրիչ ունեցող կրթօջախների հետ հարաբերությունները դիտարկվում են Հայաստանի Հանրապետության հումանիտար, միջբուհական և միջազգային համագործակցության ծրագրերի համատեքստում: Հայաստան-Սփյուռք փոխհամագործակցության շրջանակում կարևոր տեղ են զբաղեցնում կրթության և գիտության ոլորտները, ինչպես նաև հայագիտության զարգացման հեռանկարային հնարավորությունները: Այս առումով առաջնային նշանակություն է ստանում օտարերկրյա պետություններում գործող հայագիտական կենտրոնների (միավորների) գործունեության և զարգացման ռազմավարությունների արդիականացումը, որը կարող է արդյունավետ փոխգործակցության հիմք լինել կրթության և գիտության ոլորտներում ծրագրային նոր նախաձեռնություններ իրականացնելու համար:
5. Հայագիտության գլխավոր նպատակն է ապահովել նրա բոլոր ուղղությունների զարգացումը՝ համընթաց քայլելով համաշխարհային գիտության ձեռքբերումների և նոր մարտահրավերների հետ: Քաղաքակրթական մրցակցության պայմաններում հայագիտության զարգացման խնդիրները, հատկապես հոգևոր-մշակութային իմաստով, դառնում են ազգային անվտանգության և դրա կարևոր բաղադրամասի՝ տեղեկատվական անվտանգության ապահովման նախապայման: Նման իրավիճակը պահանջում է հայագիտության գործառույթների հզորացում, որի արդյունքում հայագիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների ձեռքբերումները կարող են կիրառվել ազգային և միջազգային տեղեկատվական ու գաղափարախոսական հարթակներում:
6. Հայեցակարգի մշակումը պայմանավորված է Հայաստանի և օտարերկրյա պետություններում հայագիտական կենտրոնների փոխհամագործակցության ամրապնդման անհրաժեշտությամբ, որի արդյունքում հնարավոր կլինի համատեղ մշակել և իրականացնել կրթագիտական նոր նախաձեռնություններ ու փոխանակման ծրագրեր հայագիտության ոլորտում, ինչպես նաև ստեղծել

կառուցակարգային հիմնարար պայմաններ և հնարավորություններ հայագիտության կայուն զարգացման ապահովման համար:

II. ՆԿԱՐԱԳԻՐ

1. Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման հիմնական նպատակը բարձրագույն կրթության որակի և գրավչության բարձրացումն է, օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում նոր ձևաչափերով համագործակցության և միջբուհական կապերի ամրապնդումը: Ցանցային հայագիտական համալսարանի գործունեության նպատակն է ապահովել բակալավրի և մագիստրոսական համատեղ կրթական ծրագրերի կազմակերպումն ու իրականացումը, բարձրագույն որակավորման մասնագետների պատրաստման բնագավառում միջազգային համագործակցության ամրապնդումը և աջակցել ասպիրանտների/դոկտորանտների փոխանակմանն ու գիտական համատեղ հետազոտությունների անցկացմանը:
2. Օտարերկրյա պետություններում գործող հայագիտական կենտրոնների գործունեության ռազմավարական խնդիրներն առավել քան երբևէ արդիական են, և անհրաժեշտություն է առաջացել սահմանելու դրանց զարգացման ռազմավարական թիրախային նոր ուղղություններ: Նման ուղղություններից է Ցանցային հայագիտական համալսարանի ստեղծումը, որով հնարավոր կլինի միավորել հայագիտական կենտրոններում արդեն իսկ զարգացող կարողությունները և սահմանել դրանց զարգացմանն ուղղված գործուն քայլերի շրջանակը:
3. Հայագիտական կենտրոններն այն կառույցներն են, որոնք հայոց լեզվի, հայոց պատմության, հայկական մշակույթի և հայագիտական առարկաների, ինչպես նաև Հայաստանին ու հայությանը վերաբերող թեմաներով կազմակերպում և իրականացնում են գիտահետազոտական ու կրթական գործընթացներ:
4. Օտարերկրյա պետություններում հայագիտական կառույցները ստեղծվում և գործում են տարբեր ֆակուլտետների, ամբիոնների կազմում կամ գիտահետազոտական հարթակների վրա: Հատկանշական է, որ օտարերկրյա պետությունների բուհերի հայագիտական ստորաբաժանումները հաճախ

ձևավորվում են որպես դասընթացներ, որոնք, ժամանակի ընթացքում զարգանալով, վերածվում են կրթագիտական և հետազոտական կենտրոնների կամ միավորումների:

5. Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման համար հիմք են հանդիսանում հետևյալ հանգամանքները՝ օտարերկրյա պետություններում հայագիտության նկատմամբ հետաքրքրությունը, հայկական սփյուռքի ջանքերը՝ ուղղված օտարերկրյա պետություններում հայ ինքնության պահպանմանը, Հայաստանի ջանքերը՝ ուղղված ամբողջ աշխարհում հայագիտության զարգացմանը և հայկական մշակույթի ու քաղաքակրթության տարածմանը:
6. Օտարերկրյա պետություններում հայկական մշակութային և գրական հարուստ ժառանգության առկայությունը նշանակալի աղբյուր է հայագիտական հետազոտություններ իրականացնելու գործում և հիմք է հայագիտական կենտրոնների ստեղծման ու զարգացման համար՝ իրականացվող հայագիտական հետազոտությունների շրջանակը ընդլայնելու նպատակով:
7. Օտարերկրյա պետություններում գործող հայագիտական յուրաքանչյուր կենտրոն ունի իր խնդիրները, մասնավորապես՝ մեթոդական, ծրագրային, կադրային, ֆինանսական, հետազոտությունների իրականացման և այլն: Ցանցային հայագիտական համալսարանի ստեղծմամբ հնարավոր կլինի ոչ միայն համախմբել արդեն իսկ ձևավորված կարողությունը, այլև ստեղծել հեռանկարային նոր հնարավորություններ և հիմքեր կայուն զարգացման համար՝ իրականացնելու կրթահետազոտական արդյունավետ համատեղ ծրագրեր՝ դրանով իսկ նպաստելով հայագիտության զարգացմանը:
8. Ցանցային հայագիտական համալսարանի գործունեությամբ հնարավոր կլինի իրականացնել հայագիտության միասնական և համակարգված քաղաքականություն, սահմանել գերակա ուղղություններ, Հայաստանում և օտարերկրյա պետություններում գործող հայագիտական հաստատությունների համագործակցությամբ մշակել և իրականացնել կրթահետազոտական նպատակային ծրագրեր, էլեկտրոնային կայքի միջոցով ձևավորել միասնական տեղեկատվական հարթակ՝ հետազոտվող թեմաների և նյութերի մասին տեղեկությունն առավելագույն չափով հասանելի դարձնելու նպատակով,

ընդլայնել հայագիտական լավագույն աշխատանքների հանրային հասանելիության շրջանակը՝ ապահովելով դրանց տարածումը տարբեր լեզուներով:

9. 2012 թվականից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորմամբ իրականացվում է օտարերկրյա պետություններում հայերենի և հայագիտական առարկաների դասավանդման ծրագիրը: 2023 թվականին ծրագիրն իրականացվել է 13 պետությունների հետևյալ 15 կառույցներում՝
   1) Բուխարեստի համալսարան, Ռումինիա,
   2) Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարան, Իտալիայի Հանրապետություն,
   3) Հռոմի Լա Սապիենցա համալսարան, Իտալիայի Հանրապետություն,
   4) Զալցբուրգի համալսարան, Ավստրիայի Հանրապետություն,
   5) Քենեդու համալսարան, Արգենտինայի Հանրապետություն,
   6) Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ, Ռուսաստանի Դաշնություն,
   7) Կահիրեի համալսարան, Եգիպտոսի Արաբական Հանրապետություն,
   8) Ուրուգվայի համալսարան, Ուրուգվայի Արևելյան Հանրապետություն,
   9) Գերմանիայում Մ. Լյութերի կաթոլիկ համալսարանի Հալլեյի «ՄԱՇՏՈՑ» հայագիտական կենտրոն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն,
   10) Պոտսդամի Լեփսիուսի ինստիտուտ-թանգարան, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն,
   11) Մադրիդի Կոմպլուտենս համալսարան, Իսպանիայի Թագավորություն,
   12) Բռնոյի Մասարիկի համալսարան, Չեխիայի Հանրապետություն,
   13) Ռոսարիո պետական համալսարան, Արգենտինայի Հանրապետություն,
   14) Սինալոայի համալսարան, Մեքսիկայի Միացյալ Նահանգներ,
   15) Դեմոկրիտ համալսարան, Հունաստանի Հանրապետություն:

   2023 թվականին ՀՀ պետական բյուջեի շրջանակում հատկացվել է 141720.0 հազար դրամ: Ծրագրում ընդգրկված են շուրջ 200 ուսանողներ: Ծրագիրն իրականացվում է օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության և կրթագիտական համապատասխան կառույցի միջև ստորագրված՝ դասավանդման և/կամ հետազոտություններ իրականացնելու վերաբերյալ պայմանագրերի հիման վրա:

10. Օտարերկրյա պետությունների համալսարանների, թանգարանների և գիտահետազոտական կառույցների հենքի վրա գործում են 100-ից ավելի հայագիտական կենտրոններ: Հայագիտական կենտրոնները կարող են դիտարկվել որպես առանձին հաստատություններ կամ միավորվելով կազմել կրթագիտական համընդհանուր ցանցային կառույց՝ մեկտեղելով կրթագիտական կարողությունը:

III. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Համալսարանական ցանցային փոխգործակցության ձևերի հիմնական սկզբունքներից են նախաձեռնողականությունը և կամավոր մասնակցությունը, փոխշահավետ փոխանակումները, գիտահետազոտական համատեղ ծրագրերի իրականացումը:
2. Ցանցային հայագիտական համալսարանի շրջանակում հնարավոր է կազմակերպել ցանցային կրթություն՝ համախմբելով ուսանողներին, դասավանդողներին և հետազոտողներին մեկ համընդհանուր կրթագիտական տարածքում: Նման ցանցային տարածքի առկայությունը լրացուցիչ խթան է բարձրացնելու կրթության որակը և գիտահետազոտական ծրագրերի իրականացման արդյունավետությունը:
3. Ցանցային հայագիտական համալսարանի միջոցով, ընդլայնելով ձևավորված կամ ձևավորվող կարողությունները՝ հնարավոր է իրականացնել գիտական և նորարական ծրագրային նոր նախաձեռնություններ: Նման աշխատանքների կազմակերպումը կնպաստի նաև տվյալ ուսումնական հաստատության կամ գիտահետազոտական կենտրոնի ռազմավարական առաջադրանքների արդյունավետ իրագործմանը:
4. Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման հիմքում կրթության և գիտության ցանցային ձևաչափով միավորման արդյունավետ կառավարումն է: Ցանցային հայագիտական համալսարանի յուրաքանչյուր մասնակից պետք է ունենա կրթական և գիտահետազոտական բաղադրիչներ:
5. Ցանցային հայագիտական համալսարանի կառավարումը իրականացվում է մեկ կենտրոնից՝ համակարգող մարմնի միջոցով: Նման մարմին կարող է

հանդիսանալ Հայաստանում գործող որևէ բարձրագույն ուսումնական հաստատություն կամ գիտահետազոտական կենտրոն:

6. Ցանցային հայագիտական համալսարանի գործունեության համակարգումը կիրականացվի կառավարման խորհրդի միջոցով, որը կձևավորվի Ցանցային հայագիտական համալսարանի մասնակից հանդիսացող կրթագիտական հաստատությունների ներկայացուցիչներից: Կառավարման խորհուրդը կհաստատի նաև Ցանցային հայագիտական համալսարանի միջնաժամկետ ռազմավարական ծրագիրը, տարեկան և հեռանկարային գործողությունների պլանները, Ցանցային հայագիտական համալսարանին միանալու չափորոշիչները և պայմանները, որոշումներ կկայացնի կրթագիտական կառույցներ ներգրավելու մասին, ինչպես նաև կհաստատի տարեկան հաշվետվությունները:
7. Ցանցային հայագիտական համալսարանի ստեղծումը պայմանավորված է հայագիտության ոլորտում համատեղ կրթական գործունեություն կազմակերպելու անհրաժեշտությամբ: Ուսումնական գործունեությունը կառուցված է լինելու կրթական ծրագրերի իրականացման ցանցային ձևի հիման վրա, ինչը հնարավորություն կտա ուսանողներին և հետազոտողներին ընդգրկվելու կրթահետազոտական համատեղ ծրագրերում՝ օգտագործելով Ցանցային հայագիտական համալսարանում ընդգրկված կառույցների հնարավորությունները:
8. Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական այն հաստատությունները և/կամ գիտահետազոտական կազմակերպությունները, որոնք ցանկանում են միանալ Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման համընկերության (կոնսորցիումի) մասին հուշագրին և մասնակիցների կողմից իրականացվող համատեղ ծրագրերին, կգնահատվեն նախապես մշակված և հաստատված չափանիշներով: Չափանիշներին համապատասխանելու պարագայում հնարավոր կլինի լավագույնս կազմակերպել կրթագիտական համատեղ նախաձեռնությունները հայագիտության ոլորտում:
9. Կրթագիտական գործընկեր կազմակերպություններ են համարվում Ցանցային հայագիտական համալսարանին կրթական կազմակերպությունների միանալու

չափորոշիչներին և պայմաններին համապատասխանող կրթագիտական կազմակերպությունները:

10. Ցանցային հայագիտական համալսարանի գործունեությունը կանոնակարգվելու է հուշագրի մաս կազմող համապատասխան ընթացակարգով:

11. Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման հիմնական ուղղություններն են՝

1) ուսանողների և դասավանդողների ակադեմիական շարժունության զարգացման մեխանիզմների ստեղծում,

2) նորարարական կրթական տեխնոլոգիաների ներդրում համատեղ կրթական ծրագրերով կազմակերպվող ուսուցման գործընթացներում,

3) հայագիտության բնագավառում ընդհանուր կրթական տարածքի և հնարավորության ձևավորում՝ կրթագիտական համատեղ ծրագրեր մշակելու և իրականացնելու համար,

4) Հայաստանում և օտարերկրյա պետություններում գործող կրթագիտական կառույցների միջև երկխոսության և համագործակցության ընդլայնման նոր հնարավորությունների՝ ձևաչափերի ստեղծում,

5) հայագիտության ոլորտում կրթագիտական կառույցների ռեսուրսների միավորում՝ կրթագիտական համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով,

6) աջակցություն Ցանցային հայագիտական համալսարանի մասնակից պետություններում ապրող ազգերի լեզուների, մշակույթների և ավանդույթների ուսումնասիրմանը:

12. Հայեցակարգի ընդունմամբ հնարավոր կլինի ներդնել հայագիտական ծրագրերի իրագործման ցանցային ձևաչափ՝ ուղղված կադրերի պատրաստման որակի բարձրացմանը և գիտահետազոտական համատեղ ծրագրերի իրականացմանը:

13. Կմշակվի «Ցանցային հայագիտական համալսարանի հիմնադրման և գործունեության մասին» հուշագիրը, որին անդամակցելով՝ հայագիտական կենտրոնները կստանձնեն հետևյալ պարտավորությունները՝

1) Հուշագրի մասնակից կրթագիտական կառույցների ուսանողների համար ապահովել Ցանցային հայագիտական համալսարանի տրամադրած կրթական ծառայությունների հավասար հասանելիություն՝ անկախ ազգությունից, սեռից,

տարիքից, դավանանքից, ռասայից, լեզվից, ծագումից, բնակության վայրից, առողջական վիճակից, սոցիալական և գույքային դրությունից,

2) Հայաստանի Հանրապետության կրթագիտական կազմակերպություններում Հուշագրի մասնակից կրթագիտական կառույցների ուսանողների ընդունելությունը և Հայաստանի Հանրապետության կրթագիտական կազմակերպություններում նրանց ուսուցումը համատեղ կրթական ծրագրերի շրջանակներում կազմակերպել Հուշագրին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և գործընկեր կազմակերպությունների միջև այն պայմանագրին համապատասխան, որում նշվում են համատեղ կրթական ծրագրի տեսակը, մակարդակը և ուղղվածությունը, համատեղ կրթական ծրագրով ուսուցման կազմակերպման կանոնները, կրթական գործունեություն իրականացնելու պայմանները և կարգը,

3) որպես ընդունող կողմ հանդես գալու պարագայում Հուշագրի մասնակից կրթագիտական կառույցների ուսանողների ուսուցումը գործընկեր կրթագիտական կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի շրջանակներում իրականացնել հայագիտության զարգացման համար նախատեսված հատկացումների հաշվին,

4) ապահովել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և կրթագիտական գործընկեր կազմակերպությունների միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ Ցանցային հայագիտական համալսարանի շրջանավարտները ստանան կրթության մասին և Հայաստանի Հանրապետության գործընկեր կազմակերպությունների կողմից տրված որակավորման մասին վկայող փաստաթղթեր՝ նշումով, որ Ցանցային հայագիտական համալսարանի շրջանավարտներն ավարտել են ուսուցումը,

5) ապահովել Ցանցային հայագիտական համալսարանի գիտամանկավարժական աշխատողների և սովորողների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ակադեմիական իրավունքներն ու ազատությունները:

14. Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման առաջին փուլում կդիտարկվի ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտահետազոտական կազմակերպությունների և ՀՀ պետական բյուջեի

ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրում ներառված 11 պետությունների 14 կրթագիտական կառույցների ընդգրկումը: Երկրորդ փուլում հնարավորություն կընձեռվի ընդլայնելու Ցանցային հայագիտական համալսարանի գործունեության շրջանակը՝ ներգրավելով կրթագիտական նոր կառույցներ:

15. Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման շրջանակում կդիտարկվեն նաև կրթաթոշակներ տրամադրելու և ուսանողների ու հետազոտողների փոխանակման ծրագրեր իրականացնելու հնարավորությունները: Ցանցային հայագիտական համալսարանում ընդգրկված կրթագիտական կառույցները կօգտվեն նման կրթաթոշակային ծրագրերից, ինչի արդյունքում հնարավորություն կլինի իրականացնելու կրթագիտական փոխանակման ծրագրեր:
16. Ցանցային հայագիտական համալսարանի կրթաթոշակային ծրագրի շրջանակում կրթաթոշակներ կտրվեն ինչպես կարճաժամկետ հատվածում, այնպես էլ ամբողջական կրթական ծրագրի յուրացման համար: Կրթաթոշակները կտրամադրվեն Ցանցային հայագիտական համալսարանում ընդգրկված ուսանողներին և հետազոտողներին՝ սովորելու և հետազոտություններ իրականացնելու ինչպես Հայաստանի, այնպես էլ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում և կրթագիտական կառույցներում: Կրթաթոշակային նման ծրագրի իրագործումը կստեղծի նոր հնարավորություններ՝ զարգացնելու և ընդլայնելու միջազգային միջբուհական համագործակցությունը հայագիտության ոլորտում:
17. Հայագիտության զարգացմանն ուղղված գործընթացները արդյունավետ դարձնելու նպատակով կարող է ստեղծվել հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող մարմին, օրինակ՝ հիմնադրամ: Ցանցային հայագիտական համալսարանի մասնակից կրթագիտական կազմակերպությունների անդամակցության վճարները կհաշվարկվեն մասնակցության համար սահմանված չափանիշներին համապատասխան, ինչը կներառվի նաև հուշագրում:

IV. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

1. Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման հայեցակարգի մշակումը բխում է ՀՀ կառավարության՝ 2021 թվականի նոյեմբերի 18-ի N1902-Լ որոշմամբ հաստատված N1 հավելվածի Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բաժնի 58-րդ կետի 58.1 ենթակետից:
2. Հայեցակարգի հաստատումից հետո, համաձայն հայագիտության զարգացման ռազմավարության թիրախային ուղղությունների՝ կմշակվի Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման ռազմավարությունը: Ռազմավարությունում կներկայացվեն ծրագրային միջոցառումները և ֆինանսավորումը՝ Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման գործընթացն ապահովելու համար:
3. Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման ֆինանսավորման հիմնական աղբյուր են հանդիսանալու Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն, Ցանցային հայագիտական համալսարանում ընդգրկված կրթագիտական կառույցների, ինչպես նաև միջազգային գործընկեր կառույցների ներդրումային ֆինանսական միջոցները:
4. Հայեցակարգից բխող ռազմավարության մշակումը և իրականացումը կապահովի Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման համընդհանուր մոտեցումը: Ռազմավարությունը կսահմանի միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում Ցանցային հայագիտական համալսարանի զարգացման և ընդլայնման ուղղությունները և միջոցառումների շրջանակը, որը կներառի նաև նպատակային արդյունքային ցուցանիշներ:
5. Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման ռազմավարությունը կմշակվի հայագիտության զարգացման ռազմավարության մշակման համատեքստում և կդիտարկվի որպես առանձին ծրագրային ուղղություն:

V. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. Ցանցային հայագիտական համալսարանի գործունեության արդյունքում հնարավոր կլինի ամրապնդել Հայաստանի և օտարերկրյա պետությունների

բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտահետազոտական կառույցների միջև համագործակցային կապերը, առավել արդյունավետ կազմակերպել ուսանողների, դասավանդողների և հետազոտողների փոխանակման ծրագրերը, համատեղ մշակել և իրականացնել գիտահետազոտական ծրագրեր, ընդլայնել հայագիտության ոլորտում իրականացվող հետազոտական ծրագրերի շրջանակը, բարձրացնել կրթագիտական յուրաքանչյուր կառույցի մասնակցային դերը հայագիտության զարգացման գործում:

2. Հայագիտական ծրագրերը հնարավոր կլինի համախմբել և միավորել համընդհանուր կրթական և գիտական մոտեցումներին ու ծրագրերին, բարձրացնել հայագիտության ոլորտում կրթագիտական գործունեության կառավարման արդյունավետությունը:
3. Ցանցային համալսարանի ձևավորմամբ հնարավորություն կընձեռվի ստեղծելու արդյունավետ համակարգ՝ գործող հայագիտական ծրագրերի խորացման և զարգացման ու նորանոր ծրագրային նախաձեռնություններ կյանքի կոչելու համար:
4. Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորմամբ հնարավորություն կընձեռվի նաև բարելավելու հայագիտական կրթական ծրագրերի բովանդակությունը և ապահովելու դասընթացների կազմակերպման համընդհանուր մոտեցում:
5. Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման արդյունքում հնարավոր կլինի աջակցել հայ ժողովրդի պատմությունը, հայոց լեզվի և պատմամշակութային ժառանգությունը համաշխարհային հանրությանը լավագույնս ներկայացնելուն, հայագիտական նյութերի էլեկտրոնային տարբերակները համացանցով տարածելուն, հայագիտական բովանդակությամբ հասանելի կայքերի ստեղծմանը: